ՓՈՒՂԱԿ

ԹԻՒ 1010 — ՇԱԲԱԹ — 1875 ՕԳՈՍՏՈՍ 16

ԱԶԳԱՅԻՆ

Ազգային ժողովը երէկ իւր սովորական նիստն ըրաւ, ընդ նախագահութեամբ ամենայ. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Ասլանեան վեհափայլ Սահակեան փաշայի. և դարձեալ ատենախօսութիւններ եղան՝ ազգային վարչական մարմնոյ կազմակերպութեան խնդրոյն վրայ. սակայն կարելի չըլլալով որոշում մը տալ՝ առաջիկայ նստին մնաց, պայմանաւ որ նոյն նստին առաջին խնդիրն՝ ըստ կանխաւ որոշման ժողովին, Սոյց կաթողիկոսական խնդիրն ըլլայ, և ապա սահմանադրութեան վերաքննութեան անցնի ժողովը՝ եթէ ժամանակ ունենայ։

Թերեւս ոմանք դիտողութիւն ընեն, թէ այսպէս նիստէ ի նիստ կաթողուի սահմանադրութեան յիշեալ մասին վերաքննութեան գործը. բայց այդ դիտողութիւնը չկրնար արդարանալ, երբ նկատուի թէ սահմանադրութեան դլխաւոր մասն է, և հետևաբար ազգային ժողովը տրամադիր է վարչական այնպիսի կազմութիւն մը սահմանել, որ անցեալէն ու ներկայէն շատ աւելի օգտակար ու շահաւոր ըլլայ Ազգին համար։

—

Իզմիրէն այս չարթու եկած գրերուն նայելով՝ տեղւոյն ազգայինք այս օրերս առաւել յուզեալ են։ Երեսփոխանական նորընտիր ժողովը հրաւիրուեր է առ ժամանակեայ նախագահ Տ. Գէորգ քահանայէն, բայց կարելի չէ եղեր, որովհետև ընդդիմադիր մասն՝ թէև սակաւաթիւ՝ յաջողեր է արգելքներ յարուցանել։ Ջեմք գիտեր, ինչ ձախող տեղեկութեանց վրայ, նոյն իսկ տեղական կառավարութիւնը ստիպուեր է՝ ժողովոյն գումարման որոշեալ օրն հարիւրապետ մը հանդերձ ոստիկանօք ղրկել առ Տ. Գէորգ քահանայն, և ի պաշտօնէ ծանուցանել որ ժողովը չդումարէ։

Այս ամենը հարկաւ գիտէ Պատրիարքարանը, և կվութայ արժանաւոր և արդար տնօրինութեամբ մը վերջ տալ իղձերի խնդրոյն, և չթողուլ որ տակաւին մեր այդ պատուական ազգայինք վրդովին ու յուզին ի զնաս իրենց և ի նախատինս ազգին։

—

Անցեալները գրեցինք, թէ Զարսանճագի Մեծակերտ քաղաքի հայոց եկեղեցին՝ արքունի ղօրաց վառօդարան, և ռաֆնորդարանն ու դպրոցը՝ ղօրանոց եղած են։ Արդ՝ կարինէն առ մեզ ուղղեալ նամակ մը դասուածքամբ կխմանամք, թէ կարնոյ գերապատիւ Առաջնորդն պրուսամբ քաղաքական ժողովոյն առ կուսակալն բողոքը, և նորին վճռմունքին անմիջապէս հեռագրով հրաման դրկեր է Մեծկերտի արքունի զօրաց հրամանատարին, որ եկեղեցին՝ դպրոցն ու առաջնորդարանը պարպելով հայոց յանձնեն։

Դարձեալ յիշեալ նամակէն կիմանանք, թէ հրամանաւ վեհափայլ կուսակալին կարին բերուած են՝ Մշոյ հարստահարիչներէն բազմաթիւ քիւրտեր։ Սոցա համար թէև մինչև ցարդ որոշուած մը եղած չէ, բայց քաջայոյս եմք թէ արդար ու անաչառ քննութիւն ըլլալով արժանաւոր պատժոյ կենթարկին և ի պաշտօնէ ալ կհրաժարակուի ի խրատ և ի զգուշութիւն այլոց։

—

Կրօնական ժողովը՝ հինգշաբթի աւուր նստին մէջ, Պէյօղլուի քահանաներէն Տ. Գէորգի փիլոնն առեր է վեց ամսուան համար։

Այս քահանայն չորե շաբթի առաւօտ եկեղեցւոյն մէջ խեղճ կինը մը բռնցի ու աքացի դանակոծեր է, իրմէ մուրհակաւ ունեցած առնելիքը ըստ իւր խոստման եկած ուզած տեղը մուրհակը ձեռքէն առնելով պատուելուն վրայ՝ կինը աղաղակ ու ամբոխ յարուցանելուն պատճառաւ։

Այդ միջոցին եկեղեցւոյն մէջ ազգայնոց և օտարազգեաց մեծ բազմութիւն խռներ, չարաչար մեղադրեր են զքահանայն, և հապիւ կորզեր են զկինն նորա ձեռքէն, որ այժմ հիւանդ ու վիրաւոր՝ անկողնոյ կմատնայէ եղեր։

Պէյօղլուի թաղական խորհուրդը պահ մը յետոյ քահանայէն դարձեալ պարտադիր առեր, և եղելութիւնը մանրամասնաբար տեղեկագրեր է Պատրիարքարանի։

Արդ՝ կըսեմք թէ կնոջ պարագայք կբողոքեն՝ քահանային տրուած պատիժը խիստ թեթեւ համարելով։ Եւ արդարեւ խիստ թեթեւ ու դրեթէ ոչինչ է սահմանեալ պատիժը, յանցանքին հետ բաղդատմամբ։

Վայրենի ու վայրագ լեռնականաց գործ է, և ո՛չ Աստուծոյ քահանայի...։

Շղթայակապ երկարատեւ բանտարկութեան արժանի ոճիր մ՚է այդ, և ո՛չ թէ միայն վեց ամիս փիլոնէ զրկուելու և թեւերն պարզելով սիգաճեմ պտոյտ ընելու...։

Ախո՛ս, որ եկեղեցականաց ոմանք մինչեւ այս աստիճան մեղանչելով, հասարակաց դայթակղութեան պատճառ կըլլան։

—

Ցայտնի է, թէ ազգային վարչութեան տեսուչ խորհրդոյ ու հոգաբարձութեանց վերակազմութիւնն եղաւ մտերս ըստ օրինի։

Արդ՝ խառն ժողովոյ վերջին նստին մէջ ալ գատաստանական խորհրդոյ վերակազմութեան գործը կատարեցաւ, ուրոյ անդամք են՝

Տ. Թադէոս քահանայ Սամաթիոյ
Տ. Խաչատուր » Եէնիգափուի
Տ. Արիստակէս » Գարակէօմրիւկի
Տ. Զաքարիա » Պէյօղլուի
Մելքոն էֆէնտի Հալաճեան
Միհրան » Պաղչեգափուլեան
Ստեփան » Զայեան
Յովհաննէս » Աղայեկեան

Հետևեալ սրտաճմլիկ տողերը կարդայինք՝ Սամսունէն օգոստ. 2 թուով գըրուած նամակի մը մէջ։

. . . Խմբագիր

Ասկէ առաջ տեղեկագրած էի, թէ Զարշամպայի գիւղերէն 300 տունի չափ Հայ բնակիչք պիտի դաղթեն ի Ռուսաստան։

Եւ յիրաւի սոքա գնացին մինչև Ռուսաստանի սահմանները, սակայն ձեռքերնին օսմանեան կառավարութեան պաշտօնական անցագիր չ՚ունենալով՝ Ռուսիոյ կառավարութիւնը յետս ընդ կրունկն դարձուցած է զանոնք՝ ի պատճառս, ուրկէ նաև նստելով նախորդ ամսոյ 31 ին օսմ. շոգենաւով վերադարձան այսր՝ ի Սամսուն։ Սոքա այժմ հոս կիսաքանդ պանդոկի մը մէջ կը բնակին անպատսպար, մերկ և նօթի։ Սոցա արդի կացութիւններն աղէտալի ևս է. ո՛չ ոք կրնայ դիտել այս խեղճերը, առանց կարեկից զգացումով մը արգահատելու։ կը տեսնես երախայ մը, որ իւր մօր վիզը կը փաթթուի արտասուալից աչօք. մայրը իւր արցունքներն զսակէն ծածկելու համար երեսը կը դարձունէ, վասնզի գիտէ թէ հաց կուղէ նա։ Արդէն կէսչէն աւելին հիւանդ են, որոցմէ 3–4 անձինք կը մեռնին մէկ օրուան մէջ։ վերջապէս սոքա լինքնին թշուառութեան տիպար մ՚են, որոց համար ամեն յոյս կորսուած է գրեթէ։ Թշուառութենէ ազատելու միջոց որոնելու ատեններն, փոխարէն դատ առաւել կծու աղէտներ, վասն զի հիմա առջի ունեցածներնէն ալ զուրկ են։ Գոհ կ՚ըլլան, եթէ կեանքերնին գոնէ ազատեին։

Սոցա վրայ հրաւիրեց տեղւոյս թաղ. խորհուրդը՝ տեղական կառավարութեան դումբը աղերսագրով մը, նոյնպէս և Ազգ. Պատրիարքարանի օգնութիւնը, օգոստ. 2 ամսաթիւ կրող հանրագրով մը, որոցմէ յաջող արդիւնք կը յուսացուին, վասնզի ժահու և կենաց խնդիր մ՚է այս, որ անմիջական տնօրինութեան կը կարօտի։

—

Դարձեալ Սամսունէն՝ օգոստ. 12 թուով։

. . . Խմբագիր

Ս. — կը ցաւիմ որ այս միջոցին թղթա-

կցուրթեան նիւթը դրեթէ միշտ տխուր է, վասն զի նախորդ նամակաւս տեղեկագրեցի՝ Զարշամպայի դիւղացիներէն չատ մ՚ազգայնոց ի Ռուսաստան ըրած գաղթումնին և միանգամայն աղէտալի վերադարձնին, ու ներկայ աղէխորով կացուրթիւննին։ Այժմ այլ ասոնց վրայ այսչափ միմիայն տեղեկուրթիւն պիտի կրնամ տալ, որ հոս եղած միջոցնին աղքին կողմէն թէ նիւթապէս և թէ բարոյապէս նպաստ և սիրոյանք գտան, որոյ համար չնորհակալեաց արժանի է տեղւոյս պատուարժան թաղ. խորհուրդը՝ որ փոյթ չխնայեց և տակաւին ալ չխնայեր սոցա ներկան ու միանգամայն ապագան բարւոքելու համար։

Այս խեղճերն՝ հոս երեք չորս օր մնալէ յետոյ, կառավարուրթեան կողմանէ իրենց տեղերն խրկուեցան։

2. — Անշուշտ ամեն ոք կը յիշէ որ յուհիս ամսոյ մէջ միշտ դժգոհուրթիւններ կը յայտնուէին սաստիկ տաքուրթեան ու երաշտուրթեան նկատմամբ. իսկ հիմա այս կողմերն, ինչպէս նաև ուրիշ շատ տեղեր, մարդիկ չարուճակ և ջաղջ անձրեւոց և նորա գործած անթիւ վնասուց երեսէն կուլան։ Եւ յիրաւի, ներկայ ամսոյս 3 էն մինչ այսօր գրեթէ անընդհատ կանձրևէ այնպէս որ օդն ալ ցրտանալով աշնան եղանակի մէջ կը կարծէ ամեն մարդ ինքզինքը։ Ջկայ այն օդային պարզուրթիւնն ու դեղեցկուրթիւնը՝ որ ամառուան այս ամիսներուն մէջ պէտք է ըլլայ, ըստ բնական սովորուրթեան։ Այս՝ քաղաքացւոց վնասն է, վասն զի ամառաւեն՝ ոիզմերէ, ցուրտէ և անձրևոց ըրած՝ տխուր տպաւորուրթիւնէն կը նեղուին։ Գառնանք քիչ մ՚ալ գիւղացւոց։

Երաշտուրթենէն յետոյ եկած անձրևներն, ինչպէս արդէն գրած եմ, մեծապէս ուրախացուցին երկրագործներն, վասն զի բոլոր բոյսք և արմաիք արդիւնաւոր կերպարանք մ՚առին. սակայն հիմակուան այս անձրևներն խիստ մեծ վնասներ հասուցին այս կողմերու. այնպէս որ ձանիկի բերքերուն $^1/_2$ մասն, ուրոյ մեծ մասն եգիպտացորեն է, բոլորովին ոչնչացաւ. տեղ տեղ ալ ջաղացքներ և ուրիշ քանի մի գիւղական շէնքեր հեղեղներուն զոհ գնացին. գէթ սա միայն մխիթարուրթիւն մ՚է խեղճ գիւղացի երկրագործոյ, ու մարդաւ կամ ընտանի անասնոյ ոևէ վնաս մը հասած չէ։

Խմբագիրը

. . .

Այս օրերս առիթ ունեցայ Ահեօլի–Պերդուսիէն երթալ։ Առաջինը՝ քաղաքիս երկու աւուր ճանապարհաւ հեռի է, 1000 ի չափ տաճիկ՝ յոյն ու պուլղար տուն կայ. իսկ հայք 10 տունի չափ են և 20 ի չափ ալ պանդուխտ աղգայինք կգտնուին. ուներնին եկեղեցի մը, և քահանայ մը՝ Տ. Յարութիւն Յակոբեան, որ ժողովուրդը կհովուէ և միանգամայն նոյա մանկուտւոյն կրթուրթեան համար հոգ կտանի։ Գալով Այտոսի, 4 ժամու ճանապարհաւ հեռի է Ահեօլի–Պէրդուսիէն, 800 ի չափ տաճիկ և յոյն ու պուլղար, քանի մը տուն աղգայինք ու մէկ քանի պանդուխտք ալ հոն կգտնուին, և ասոնց ալ հոգևոր հովուուրթիւնը յիշեալ քահանային յանձնուած է։ Այս երկու գիւղաքաղաքները լեռներէն առաջնորդուրթեան ներքակեալ են։

Քահանային համար կեդրոնական սրընտուկէն ամսական կվճարուի. դուժար մ՚ալ ամեն ամիս Ահեօլի–Պերդուսիէն կը տրուի. գաւելով ըսեցի որ տեղէն սահմանեալ թոշակն չորս ամսէ հետէ անվճար մնացած ըլլալով՝ քահանայն ներելուրթիւն կկրէ։ Պարտ համարեցայ լինել խնդրել հրապարակաւ, որ քահանային դժգոհուրթեան տեղի չտան. կաշխատի նա իւր կարողուրթեան չափ։ Այս խնդիրն մասնաւորապէս կուղղեմ փաշայէկեան ակնցի Յովհաննէս էֆէնտիի, որ գործով կգըտնուի հոն. նա կարող է պէտք եղածն և աւելին իսկ ի գործ դնել տալ։

Կիսատանամ . . . խմբագիր, այս և ուրիշ կողմանց վրայ ուրիշ անգամ գարձեալ տեղեկուրթիւն հաղորդել ձեզ։

* * *

Վաղը, Ս. Աստուածածնի վերափոխման տօնի կիւրակէ՝, օգոստ. 17, Գարթալի Ս. Նշան եկեղեցւոյ մէջ, Գերապատիւ Տ. Մկրտիչ Խրիմեան Ս. Հայրիկը Ս. Պատարագ պիտի մատուցանէ՝ ի հոգևոր մխիթարուրթիւն ժողովրդեան։

Ուսաի կհրաւիրուին ամեն Աղգայինք, որք կը փափաքին Նորին Դերապատուուրթեան օրհնուրթիւնը լսել, և նոյն առուր հոգևոր հանդիսին ներկայ գտնուիլ։

11 օգոս. 1875

՚ի Գարթալ

՚ի դիմաց Թաղ. խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Սրբէն Գէնճեան Սարգիս Քէնթրոսոպեան

Ցառաջիկայ երկուշաբթի, օգոստոս 18, մեռելոցի օրն, Իւսկիւտարի Սէլամլիյէ վարժարանը ըստ սովորուրթեան պիտի բացուի, և լեզուագիտուրթեան և ուսման դասերն պիտի աւանդուին ժամ 4 էն մինչև 6. ապա ժամը 6 ին պիտի ատենախօսէ արժ. Տ. Պօղոս վարդապետ Խոլոտմեան։

Ուսաի ի տեղեկուրթիւն ունկնդրաց և դասատուաց ըսյս հրատարակեմիդ կը խնդրեմ։

16 օգոստ. 1875 Քէնթրոսոպոսը Ղազարոսեան

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բարձրապատիւ Մահմուտ Նեձիմ փաշա՝ մեծ եպարքոս, և հասարակային չինուածոց նախորդ. նախարար Սերվեր փաշա՝ Շուրայի–Տեվլեթի նախագահ անուանելով հինգշարթի օրը, սովորական հանդիսիս Բ. Դուռը գալեն և պարտաւորական եղած արարողուրթիւնները կատարուելէն յետոյ, գինուորական գործոց պաշտօնատունը գացին և բարձրապատիւ Եուսուֆ Իզզէտտին էֆէնտիին ներկայացան առ ի շնորհակալուրթիւն։ Անոնք անմիջապէս օդոստափառ Սուլթանին ներկայանալու և իրենց շնորհակալիքն ժամատուցանելու պատիւն ունեցան։

Ոստիկանուրթեան գործոց նորընտիր վերատեսուչ Բէհիճ փաշա ալ՝ իր այս նոր պաշտօնակալուրթեան առիթիւ նորին վեհափառուրթեան ներկայացաւ։

— Ոստիկանուրթեան ամեն աստիճանի պաշտօնատարաց ալ պատուէր եղեր է՝ առաւօտուն ժամը 2 էն մինչև 11 իրենց գործոց գլուխը գտնուիլ։

— Բ. Դրան և Յունատանի մէջ հպատակաց ընտրուրթեան համար բացուած լնդիրն բոլորովին վերջացեր է, որոշուեցավ որ մինչև 1858 հելլենական հպատակ եղողներն այնպէս ընդունուին, իսկ այնուհետև հելլենական հպատակուրթիւնն ընդունողները պարտաւորին հաստատել իրենց նոյն հպատակուրթիւնը։

— Օգոստափառ Սուլթանը ցաւակցուրթեան դիր ուղղեր է առ Թագաւորն Պավիէրայի, Շարլը իշխանին ձիէն իյնալով մեռնելուն համար։

— Աւստրիական դեսպանը այսօր կներկայանայ օգոստափառ Սուլթանին, հինգշարթի օրը մեծ եպարքոսի փոխանորուրթեան պատճառաւ չկրնալով ներկայանալ։

— Պարոյր կուսակալ Մէհմէտ Նասրը փաշա երեկ պաշտօնատեղին ուղեւորեցաւ՝ յատկապէս վարձեալ շոգենաւով մը։

— Ֆազիլ Մուսթաֆա փաշա՝ որոյ հիւանդուրթիւնը ծանր էր՝ սկսեր է առողջանալ։

— Թալիա անուն կայսերական շոգենաւն՝ պատերազմական պիտոյք բեռնաւորեալ՝ հինգշարթի երեկոյ դեպ ի միջերկրական ծով ուղեւորեցաւ։

— Մայրաքաղաքիս հրշէջներու նորակազմ դունդերու համար՝ բէշիկ ապրուստ ջրհաններուն չինուրթիւնն աւարտեր, և ճամբայ հանուեր են։

Կառավարուրթեանց վերին աստիճանի պաշտօնատարաց թոշակաց զեղչուելուն պատճառաւ, կրեաէի կառավարական մատուկին տարին 600 հազար ղրուշի չափ շահ կմնայ։ Այս կղզւոյն կառավարուրթեան համար տարին 10 միլիոն ղրուշ ծախք կրլլայ, միայն 80 հազար ղրը դասատարակուրթեան համար սահմանուած ըլլալով։ Կղզւոյն բոլոր բնակչաց թիւը՝ 300 հազար կհաշուեն։

— Աղեկսանդրիայէն 4000 ղրք Սուէշի ճանապարհաւ Հապէշստանի սահմանները ղրկուեր են, խնդրուելով որ հապէշոյ կողմանէ Եգիպտոսի վրայ յարձակելու համար պատրաստուրթիւն կըլլայ։ Բայց ղարմանալի է հապէշոյ այս ընթացքը. արդէն իրենց մէջ այլևայլ կուսակցուրթեանց բաժնուած են անգղիացւոց վերադարձէն հետէ. չարուճակ ցեղ ցեղի վրայ պատերազմի կելնեն, և քանի մը թագաւորներ կգտնուին. արդեօք ասոնց ո՛րն է որ կհամարձակի Եգիպտոսի պէս երկրի մը վրայ արշաւել և նորա ղօրուրթեան դիմադրել։

— Պերուրթէն մինչև ցարդ 30 հազար հոգի այլևայլ կողմեր ցրուեր են՝ քօլէրային պատճառաւ։

Շուրայի–Տեվլեթի նախագահ Սերվեր փաշա հինգշարթի օրը Հերսեք ուղեւորեցաւ մայրաքաղաքէս՝ ինչպէս յայտնի է, ապստամբաց բազմքներն ու գանգատները յանուն կառավարուրթեան լսելու պաշտօնով։ Նաև Հերսեք պիտի ժողովուին աւստրիական՝ ռուսական՝ գաղղիական՝ իտալական՝ գերմանական ու անգղիական հիւպատոսք, ապստամբ-

ներն ի հնազանդութիւն յորդորելու և միջնորդելու համար։

Յունաստանի դրութէ բոլոր լրագիրք միաձայն կ՚յայտարարեն, թէ Յունաստան երբեք չմիջամտէ Հերսէքի խնդրոյն մէջ՝ ինչ որ ալ ըլլայ, և հաստատ պիտի պահէ օսմանեան կառավարութեան հետ ունեցած բարեկամութիւնը։

Նոյնպէս Րումանիայէն այսպիսի յայտարարութիւններ կըլլան, և Րումանիոյ մէջ հանդարտութիւնը երբեք վրդոված չէ եղեր։

Կհարծուի, թէ ապստամբութիւնը՝ որ երբեք օգնութիւն չգտնելը կառավարութեանց կոզմանէ, չուտով պիտի վերջանայ, և կայսերական գանձէն 2 միլիոն լիրայէն աւելի չպիտի ելնէ զինուորական ծախուց համար, կըսէ Լէվընթ Հէրըլտ։

Ապստամբներէն 600 հոգի աւստրիական սահմանը փախեր են, և հոն տեղական կառավարութեան կոզմանէ ղէնքերնին առնուեր է։ Նէվէսինի կոզմերն ալ ղօրաց ու ապստամբաց մէջ կռիւ մը տեղի ունեցեր է, բայց դեռ ծանօթութիւն չկայ։

Պօսնայի դաւառական լրագրէն կիմանամք, թէ վիճակին պաշտօնատարաց և այլ ձեռնհաս անձանց կոզմանէ 600 ձի հանդերձ ամեն ապստաւք նուիրուեր է, Հերսէքի ղօրաց պիտոյից վոխադրութեան համար։ Եւ այս հայրենասիրական գործոյն համար՝ Բ. Դուռը ի գիմաց Օ. գոստափառ Սուլթանին գոհունակութիւն յայտներ է։

Նաև, յիշեալ լրագիրը կծանուցանէ, թէ կուսակալութեան կոզմանէ հրաւէր ըլլալով համայն երևելեաց և կրօնական գլխաւորաց, պատուէր եղաւ որ հասարակութիւնը զգուշացունեն՝ անոտի լուրերու և չափազանցութեանց կարևորութիւն տալէ, և միանգամայն յորդորեն որ իրենց սովորական աշխատութեամբն զբաղին անվրդով սրտիւ։

Երկրորդ բանակին հնձելազօրաց չորրորդ գունդը՝ Սօֆիայէն ճամբայ ելեր է Պօսնա երթալու համար։

12 ի չափ բժիշկք ու վիրաբոյժք՝ Հերսէքի ղօրաց համար ղրկուեցան մայրաքաղաքէս։

Մայրաքաղաքէս թայմզին գրեր են, թէ ռուսական՝ աւստրիական ու գերմանական դեսպանք առաջարկեր են Բ. Դըրան, զինադադար ընել և ապստամբաց դանգատներն լսել ու քննել, բայց չէ ընդունուեր Բ. Դրան կողմանէ։

Կայսերական ղօրքը Հերսէքի մէջ բաւական է ապստամբները զերի բռնելու դիտմամբ։ Այսուհանդերձ մէկ քանի վրայ ճանապարհի քննութեան և մէկմէկու հետ հաղորդակցութեան համար, այրուձի կգտնուի։

Կըսուի, թէ մօտերս Րումելիի մէջ զինուորական չարժում մը պիտի ըլլայ։ Երկրորդ բանակն՝ կեդրոնն եղող Մանաստիրէն ելնելով Սկլանիկի ճանապարհաւ բերչենկէ պիտի երթայ եղեր։ Այս բանակի բէտիֆները Հերսէքի վրայ պիտի ղրկուին, և երկրորդ բանակին բէտիֆներն ալ առաջիններուն տեղը պիտի անցնին։ Րումելիի մէջ երեք առաջին և երկրորդ կարգի պահեստի զօրքը ի ղէն բերուի, ըստ նոր կանոնադրութեան՝ 70 գունդ (թապուր) կըլլայ եղեր։

Զինուորական գործոց պաշտօնատան դիւաններէն դրագրաց ոմանք Հերսէք ղրկուեր են, զօրաց գրական պիտոյից համար։

Կարիպալտի 100 ֆրանգ նուիրեր է՝ Հերսէքի վիրաւորելոց համար,

Ապստամբաց վրայ տրուած տեղեկութեանց նայելով 4 գունդի բաժնուած են։ Առաջինը Նարէնթայի եղերքը կը գտնուի. այս գունդը Թրէպինէի առջեւ դալով՝ անձնադարձը պաշարողներուն հետ միացեր է։ Թրէպինէ գըտնուող զօրքը 4000ի կհասնի, բայց ապըստամբաց թիւն յայտնի չէ։ Այս գունդը Թնդանօթ մ՚ունի, և հրամանատարը՝ Աւստրիոյ Թնդանօթաձիգ զօրաց նախկին զինուորականներէն մէկն է եղեր։ Երկրորդ գունդը Գարատաղի սահմանը կգտնուի, և կնդրոնատեղին վանք մ՚է։ Երրորդ գունդը Նեվէսին է, 1862 ապստամբութեան գլխաւորներէն մէկուն հրամանատարութեան ներքև։ Չորրորդը Սթօլացի կոզմերը բռնակալ է, և Սթօլացն պաշարեր՝ է, բայց չէ յաղթեր։ Ասոնք կարգելուն Նարէնթայի գետէն անցնիլ։ Ասոնք նպատակ ունին միանալ բայց նախ Թրէպինը գրաւել կուզեն. ամեն տեսակ՝ հին ու նոր հրացան ունին, կաշխատին ղօրաց ձեռքէն ընտիր ղէնքերն առնուլ։ Լեռնային փոքր Թնդանօթ մ՚ունին, և կըսուի թէ ուրիշ Թնդանօթներ ալ գնած են, ու անոնց գալուն կսպասեն։

Սերվիոյ իշխանութեան կոզմանէ վիէննա գտնուղ գործակատարն Պելկրատ կանչուեր է։

Բ. Դրնէն Հերսէք երթալու հրաման գացեր է եէնիպազար գտնուղ զօրաց, որոց հրամանատարն է Շեվքէթ փաշա՝ որ կայսերական պալատան առաջին սենեկապետի պաշտօն վարած է երբեմն, և քալ ու անվեհեր զինուորական մ՚է եղեր։

Օսմանիոյ կառավարութիւնը աճուրդի հաներ է՝ Քարլօսեան կուսակցաց գըրաւեալ ստացուածքը, բայց ոչ ոք չէ կրցեր մերձենալ. որովհետեւ Քարլօսի կոզմանէ ազդարարութիւն եղեր է թէ ո՛վ որ այդպիսի ստացուածք մը գնէ, Քարլօսի իշխանութեան տակ գտնուղ երկրին մէջ նորա ունեցած մեկ ագարկանը երեք ժամու մէջ հրացանաց հարուածներով չարաչար պիտի սպանուի։

— Ռուսիոյ հասարակաց կրթութեան նախարարն հրամայեր է, որ բոլոր բարձրագոյն կարգի վարժարանաց մէջ մարմնամարզութիւն և ուրիշ այսպիսի կրթութիւն տրուի ուսանողաց։

Այս՝ զինուորութեան նախապատրաստութեան նպատակաւ է, կըսեն։

— Ամէնքէն օգուտ. 1 թուղ հեռագիր մը ծանայց՝ ազդային ժողովոյ բացուիլը։ Թագաւորն իր առնախօսութեան մէջ ըսեր է, թէ օտար տէրութեանց հետ Յունաստանի յարաբերութիւնք գոհացուցիչ վիճակի մէջ են, երկրին յառաջադիմութեան համար ջանք կըլլայ, ազգային օրէնքը կէտ առ կէտ պիտի գործադրուի, ներքին բարեկարգութեան համար պէտք եղած միջոցները ի գործ պիտի դրուին, նախարարաց ընտրութիւնք ըստ կամաց ազգին պիտի ըլլան, եւրոպական նոր դրութեան համաձայն զինուորական կրթութիւն պիտի տրուի համայն ժողովրդեան, և կալուածական տուրքը արդարութեամբ ու չափաւորութեամբ պիտի բաշխուի, և այլն։

— Օսմանիոյ կառավարութիւնը որոշեր է, 100 հազար հոգի ալ զինուորագրել, և նոր արժէթուղթ շրջաբերութեան հանել, և վերջապէս չանալ զգարլոս չուտով նուաճել, և երկրին ամեն կողմն խաղաղութիւն ու օրինաւորութիւնը վերահաստատել։

— Անգղիական ընկերութեան սը շոգենաւներէն մէկը՝ Պոյըն անուն՝ Պրազիլիայէն Անգղիա դարձած ատենը, ճամբան ընկղմեր է։ Ճամբորդք ու նաւաստիք ազատեր են, բայց 20 հազար 680 լիրա և այլ բեռնք անդնդասոյզ եղեր են։

— Անցեալ 1874 ին, փարիզի մէջ 504 հրդեհի դէպք պատահելով՝ 3 միլիոն 474 հազար ֆրանգի չափ եղեր, և այրած չէնքերուն մեծ մասը ապահովագրեալ ըլլալով՝ ընկերութիւնք վճարեր են։

ԻԱՆ
ՊԱՊԸ ՍԷՐԱՖԷԻՐ

Ապաքիրի չահանէ էլպիսէ անպարբնա մէմուր նիւմունէլերինէ թաթպիդէն լիւզումի օլան 500,000 արշըն սըդ գանավաչներն պէհէր արշընը իքի ղրշ վէ կէօմլէկլիք էվ պէղինին պէհէր թօփը 16 ղրշ 25 փարայա օլարագ թալիպլերի էօհտէսինտէ օլուպ, աղօսթօսը բումինին իկիրմինճի չէհարչէնպիհ կիւնի գարարը գաթիլերի վիրիլէճէկինտէն՝ իթա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմը մէզբիւրտէ սաաթ ալթըտա տարը չուբայի ասքէրիյէ կէլմէլէրի։

14 աղօսթօս 1875

Տօպէա թէնէքէսի ատէտ 2450 պէհէր ատէտի 7 ղրշ։

Տօպէա թէնէքէսի ատէտ 810 պէհէր ատէտի 5 ½ ղրշ։

Ֆրանսըզ քէօսէլէսի դըյէ 1364 պէհէր դըյէսի 46 ղրշ։

Թօփխանէի ամիրէ իչուն մուպայեա օլունաճագ օլան պալատէ մուրագտամ թէնէքէ վէ քէօսէլէնին ֆիյաթը մուրագտամլերի վէճհէլէ թալիպլի էօհտէսինտէ օլուպ՝ աղօսթօսը բումինին իկիրմի պիրինճի վէնճէլէնպիհ կիւնի գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն, իթա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմը մէզբիւրտէ սաաթ ալթըտա տարը չուբայի ասքէրիյէ կէլմէլէրի։

14 աղօսթօս 1875

Թօփխանէի ամիրէ իչուն մուպայեա օլունաճագ օլան 70,800 քըյէ 36 նիւմէրօ ձինքօնըն պէհէր քըյէսի 7 ղրուշա օլարագ թալիպլի էօհտէսինտէ օլուպ՝ աղօսթօսը բումինին օն տօքտուղունճը սալի կիւնիւ գարարը գաթիսի վէրիլէճէկինտէն, իթա իթմէյէ թալիպ օլանլարըն եէվմի

մեղքիւրտէ սաաթ ալթըտա Տարը Շուրջի ասքերիյէ կէլմէլերի ։

12 Աղոսթոս 1875

—

Սիւվարիալայլարը հայվանաթընատան, թէպտիլի լաղըմ կէլէնլերին եէրինէ հայվան մուպայեա օլունաճաղընատան՝ տինճ վէ սաղլամ հայվանը օլուպ տա սաթմաք իսթէյէնլերին հայվանլարընը Պաալը Սէրասքերիյէ կէօթիւրիւպ քօմիսիոնը մախսուսընա կէօսթէրմէսի լազըմ կէլէճէյի իլան օլունուր ։

12 Աղոսթոս 1875

—

Տօքտան պիր սէնէի բումիյէսի իլուլիպթիտասընատան իթիպարէն ալթը այտա մահ պէ մահ 166,660 գըյէսի Բախօզա վէ եախօտ Գըլիք լիմանլարընըն հանկըսընա իսթէնիլուր իսէ՝ օրատա սէֆինէտէ թէսլիմ օլունմաք չարթը իլէ նիւմունէսի վէճհ իլէ 1,000,000 գըյէ գափանը տադիպ տէկիրմէնինին իփինճի նիւմէրօ տադիպտին պէհէր գըյէսի 105 փարայա օլարագ թալիպի էօհտէսինտէ օլուպ՝ իթա իթմէկէ թալիպ օլանլարընն տարը չուրայի ասքերիյէ կէլմէլերի ։

12 Աղոսթոս 1875

—

Նանը ադիզ իտարէսինէ նիւմունէսի վէճհլէ մահ պէ մահ 1500 քանթարտան 2000 գանթարա գատար լիւզումի օլան պէքսիմաթընն պէհէր գանթարը 130 ղրուշա օլարագ թալիպի էօհտէսինտէ օլուպ՝ աղրսթօսու բումինին օն տօգուզունճու սալը կիւնիւ գարարը գաթիսի վէրիլէճէկինտէն վէ էկէր մահ պէ մահ վէրիլէճէք 2000 գանթարտան տահա զիյատէ տախի իթասընա թալիպ օլունուր տա ալընաճաղընատան, մէղքիւր պէքսիմաթընն իթասընա թալիպ օլանլարընն եէվմը մէղքիւրտէ սաաթ ալթըտա տարը չուրայի ասքերիյէ կէլմէլերի, նիւմունէսինի կէօրմէք իսթէյէնլերին տահա էվվէլճէ չուրայի մէղքիւրէ միւրաճաաթ իթմէլերի ։

12 աղօսթօս 1875

ԱԼԹԸՆՃԸ ՏԱՅԻՐԻ ԻԼԱՆԸ

Ալթընճը Տայիրէ տախիլինտէ պուլունան սու էօհապընա, Տայիրէ թարաֆընտան կէօնտէրիլմիյ օլան մէսարիֆ բուսուլալարը, թամիրէն վէ միւճէյտաէտէն տէրտէսթ լինյա օլան սու եօլլարընըն, եալընըզ անա պօրուլարը մէսարիֆ վաքաասընատան հիսէլէրինէ իտապէթ իտէն ա.քչէնլին մը.քտարընը միւպէյին օլտուղինատէն, վէ քէնտիլէրի .քուլա.ք թապիր օլունուր սու պօրուլէրի պաչքաճա թամիր վէ թէճահիտ իթմէկէ մէճպուր իսէտէ անճա.ք պուլնարը իսթէհսիլքէրի սու եօլճուլարը մարիֆէթիլէ լինյա իթտիրմէ.քտէ տախի միխթար պուլունաուդէրինատէն, մէղքիւր քուլա.ք պօրուլէրին թամիր մէսարիֆի նամի իլէ, այրուճէ սու էօհապընա իրտալ .քըլընմա.քտա օլաուղու թահ.քի.ք օլունան բուսուլալէրին Տայիրէ թարաֆընատան կէօնտէրիլմէմիշ իտուկէ, ճիւմլէնին մարիւմի օլմա.ք իւզրէ իլանը քէ.յֆիյէթէ իսլահիտար .քըլընտը ։

12|24 Ավըսթօս 1875

Սէր .քեաթիպ
Սիմոն Բաբաճան

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲՈՒՆՔ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Երէ֊էչմիածին

Ցուհաննես պապաճլոյ Մ'ալեան

Ա.յս պատուական աշխատասիրութիւնը՝ որ նիւթոյն ընտրութեան, և դիւրիմաց ու հեշտ ոճ մ'ունենալուն պատճառաւ ազգային վարժարանաց համար խիստ պիտանի դասագիրք մը կրնայ ըլլալ, – Արմաշի վանական մամիչն 1865 ին արդէն ի լոյս ընծայուած ու սպառած լինելով, այս երկրորդ անգամ տպագրուած է՝ առաջարկութեամբ մայրաքաղաքիս և դաւառաց բազում վարժարանաց տնօրինութեանց ։

Կգտնուի բոլոր հայ գրավաճառաց խանութները ։

—

ԱՆԻԾԵԱԼՆ

ՀԵՂԻՆԱԿ

Ա Ր Թ Ա Յ

ԹԱՐԳՄԱՆԵԾ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ.

ԶՄԻՒՌՆԻԱ

Տպագրութիւն Տէտէեան

Կը գտնուի Կ. Պոլիս Զաքմաքճըլար փողոց Գալաֆեան եղբարց գրատունը, և Զմիւռնիա Տէտէեանց վաճառատունը, ի գին 28 ղրշ ։

—

ՇՈՒՇԱՆ ԵԱՒՍՐՇԱՆԱՅ

ՇԱՐԱԴՐԵԱՑ

Գ. վ. Սրուանձթեանց

Գինն է 3 ղրուշ, և կծախսուի հայ գրավաճառաց խանութները ։

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԱԻԻՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Աբգենէ Գ. Կոստանդեան

Բ. ՏԻՊ

Զմիւռնիա

Տպագրութիւն Տէտէեան

Կը գտնուի Կ. Պոլիս Զաքմաքճըլար փողոց Գալաֆեան եղբարց գրատունը և Զմիւռնիա Տէտէեանց վաճառատունը, ի գին 28 ղր ։

—

ԶՕՃԸԴԼԷՐԻ ՀԱՏՈՒՑԻ

Տաճկերէն լեզուին հմուտ նշանաւոր ազգայնոյ մը գրչէն ելած է՝ տաճկերէն լեզուին համար դիւրուսոյց ընթերցարան մը յիշեալ անունով՝ որ բազմաթիւ օգտակարագոյն նիւթերու վրայ տեղեկութիւններ կպարունակէ հանդերձ պատկերներով, և միանգամայն կարեւոր խրատներ կաւանդէ ։ Կառավարկեմբ ազգային վարժարանաց տաճկական լեզուի յարգոյ ուսուցչաց, որ այս ընտիր ընթերցարանը տան ուսանողաց ձեռքը ։ – Գինն ալ աժան է, այսինքն՝ 5 ղրուշ, և կգտնուի ամեն հայ գրավաճառաց խանութներն ալ ։

Իւսկիւտար Ղուզղունճուղի բարձանց վրայ 360 կանգուն օգաստն և ընտիր գետին մը՝ ծախու է ։

Ուզողը կհրաւիրուի առ տնօրինութիւն լրագրոյս ։

—

Կիպրոսի աղնիւ և ազնդարար գինին՝ որ մարմին և արիւն զօրացնելու և ստամոքսի ոյժ տալու համար, շատ անգամ փորձուած և շատ օգուտներ տեսնուած է, 3 էն՝ մինչև 20 տարեկան, և Անդրիանուպօլսոյ աղնիւ և մաքուր 2 էն մինչև 10 տարեկան, և ուրիշ քանի մը տեսակ զուտ և մաքուր գինիներ և խաղողէ քաղուած զուտ և պատուական օղիներ և մանիշակէ զուտ և մաքուր չինուած պատուական օշարակ՝ որ մարդուս շատ օգտակար է, զմաած չիչէնեորով և չափաւոր գիներով կը ծախուի Կ. Պոլիս Թահմիզ փողոց թիւ 9 մաղազան, և Բերա Պօմարշէի դիմաց Գ. Բըլըճեանի մաղազան ։ ՕՐ արդքա,ով չզմուսածներն՝ երաշխաւորեալ չեն ։

Կգտնուի նաև՝ չայէ քաշուած ընտիր օղի, և ձէթ՝ խիստ ընտիր տեսակէն ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՈՒՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անջատուրութեանց հետքերը։ Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ ։ Իր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, գլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կզգենու ։

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրփխնէ), սրունկի և ստեանց վերքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ օգացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան ։ Իր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահճէ–գափու Թաչ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի ։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հղինակն տոքթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքըսֆորտ փողոց թիւ 533 ։

ՊԱՅՄԱՆԵՔ ՓՈՒՆՋԻ

1.—Փունջը ԶՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի ։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իր արուարձանաց և թէ՛ գաւառաց համար ։

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի ։

4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ ։

5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով ։

6.—Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անգամի համար ։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար ։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն–Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պոլիս Ալաճա–Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19 ։

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԷՐ
Հ · Ս · ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ· Ս· Ղ· ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՔ
Բիզա փաշա խանի թիւ 3